

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2025-2026 ուս. տարվա
գիտական խորհրդի առցանց հարցման նիստի

ք.Երևան

01 դեկտեմբերի 2025թ.

Ներկա էին (հարցմանը մասնակցել են)՝ գիտխորհրդի 20 անդամներից 14-ը:

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, Ֆարմբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի դոցենտ՝ Աննա Մկրտչյանի կողմից ղեկավարվող «Օպտիկապես ակտիվ նոր α -ամինաթթուների սինթեզ Գլայդերի եւ Մաննիխի ռեակցիաների կիրառմամբ և դրանց հենքի վրա կառուցված կարճ պեպտիդների ստացում և հետազոտում՝ որպես քիրալային օրգանականատալիզատորներ» վերնագրով թեմայի ընթացիկ հաշվետվության քննարկում և հաստատում:
2. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, Ֆարմբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի դոցենտ՝ Աննա Մկրտչյանի կողմից ղեկավարվող «Օպտիկապես ակտիվ նոր α -ամինաթթուների սինթեզ Գլայդերի եւ Մաննիխի ռեակցիաների կիրառմամբ և դրանց հենքի վրա կառուցված կարճ պեպտիդների ստացում և հետազոտում՝ որպես քիրալային օրգանականատալիզատորներ» վերնագրով թեմայի ընթացիկ հաշվետվության քննարկում և հաստատում:

Հսեղին՝ գիտական խորհրդի քարտուղար, ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (№ 9.0/9.3.1/36969-2025, առ 04.11.2025թ.)

գրության մինչև ս.թ. դեկտեմբերի 5–ը «Գիտական ստորաբաժանումների ամրապնդման ծրագիր - 2024» ծրագրի շրջանակում իրականացվող նախագծերի ղեկավարները ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե պետք է ներկայացնեն ընթացիկ հաշվետվություն՝ կցելով գիտական խորհրդի քաղվածքը թեմայի իրականացման ընթացքի վերաբերյալ: Աննա Մկրտչյանի կողմից ներկայացված գրավոր հաշվետվությունը կցվել է նիստի օրակարգին: Համաձայն հաշվետվության, հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ծրագրի առաջի երկու եռամսյակում իրականացվել են լուծիչների և ելանյութերի մաքրում, ձեռք բերում, գոնումների իրականացում, կազմվել է առաջնային նյութերի և սարքավորումների պահանջների ցանկը, և սկսվել է գոնումների կազմակերպման գործընթացը: Երկրորդ եռամսյակում մեկնարկվել է անհրաժեշտ ելային կոմպլեքսների ստացումը՝ քանակական ելքով, ինչը հնարավորություն է տվել ապահովել հետագա փորձարարական փուլերի ընթացքը՝ համաձայն ծրագրի օրացուցային պլանի: Շարունակելով աշխատանքները՝ իրականացվել է նաև սինթեզված կոմպլեքսների նախնական բնութագրումը՝ կիրառելով ՄՄՌ վերլուծական մեթոդներ: Երրորդ եռամսյակում սկսվել են նախապատրաստական աշխատանքներ՝ հաջորդ փուլերի համար, ներառյալ՝ ռեակցիոն պայմանների օպտիմալացումը, անհրաժեշտ սարքավորումների և նյութերի համալրումը, ինչպես նաև հետագա փորձարարական ուղղությունների պլանավորումը: Երրորդ եռամսյակում սինթեզվել են α -դիքքում տարբեր տեղակալված բենզիլային խմբեր պարունակող գլիցինի, պրոպարգիլգլիցինի և ալիլգլիցինի քիրալային կոմպլեքսներ: Ստացված կոմպլեքսները հաջորդ եռամսյակներում պետք է հետազոտվեն Մաննիսի, Գլայդերի և այլ անվանական ռեակցիաներում: Իրականացված գիտահետազոտական աշխատանքների արդյունքները հրապարակվել են հետևյալ հոդվածում.

Hayriyan, L., Grigoryan, A., Gevorgyan, H., Tsaturyan, A., Sargsyan, A., Langer, P., Ashot Saghyan, & Mkrtchyan, A. (2025). A³-Mannich coupling reaction *via* chiral propargylglycine Ni(ii) complex: an approach for synthesizing enantiomerically enriched unnatural α -amino acids. *RSC Advances*, 15(42), 35379–35387. <https://doi.org/10.1039/d5ra04554a>

Այսպիսով, ծրագրի իրականացման 2024 թ. դեկտեմբերի և 2025 թ. նոյեմբերը (Q1–Q4) ընթացքում կատարված աշխատանքները համապատասխանել են

պայմանագրով սահմանված օրացուցային պլանին և կատարելիք առաջադրանքներին: Այս ժամանակահատվածում իրականացվել են ինչպես նախապատրաստական, այնպես էլ հիմնական սինթեզային, վերլուծական ու հետազոտական աշխատանքներ:

Ծրագրի ընթացքում շարունակվել է արդյունավետ համագործակցությունը Գերմանիայի Ռոստոկի համալսարանի պրոֆեսոր Պ. Լանգերի հետ: Համագործակցության շրջանակում իրականացվել են համատեղ քննարկումներ և գիտական խորհրդակցություններ՝ սինթեզների օպտիմալացման ուղղությամբ, առաջացած տվյալների համեմատական վերլուծություն, ինչպես նաև CD և X-ray մեթոդներով ստացված արդյունքների համատեղ գնահատում: Միջազգային համագործակցության կարևոր արդյունքներից է նաև համահեղինակությամբ գիտական հոդվածի հրապարակումը RSC Advances ամսագրում: Բացի այդ, 2026 թվականին նախատեսվում է ծրագրի շրջանակներում երիտասարդ մասնագետների գործուղումը Ռոստոկի համալսարան՝ հետազոտական հմտությունների ընդլայնման և միջազգային փորձի փոխանակման նպատակով:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել.

Գիտական ստորաբաժանումների ամրապնդման ծրագիր - 2024» շրջանակում Ա. Մկրտչյանի ղեկավարությամբ իրականացվող «Օպտիկապես ակտիվ նոր α-ամինաթթուների սինթեզ Գլայդերի եւ Մաննիխի ռեակցիաների կիրառմամբ և դրանց հենքի վրա կառուցված կարճ պեպտիդների ստացում և հետազոտում՝ որպես քիրալային օրգանակատալիզատորներ» վերնագրով թեմայի ընթացիկ հաշվետվությունը:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝

ք.գ.թ. դոցենտ

Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

ք.գ.թ., դոցենտ

Ա. Դադայան